

**Աշխարհագրությունն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի
մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)
9 – րդ դասարան**

1. Քա՞նի հորիզոնական կարելի է տանել քարտեզի վրա, Ատլանտյան օվկիանոսի մակարդակից մինչև Մոնբլանի գագաթը, եթե հորիզոնականները տարված են յուրաքանչյուր 200 մետրը մեկ.....1 միավոր
2. Դուրս գրել ծովային նավահանգիստները 1 միավոր
Թուրին, Սանտյագո, Աթենք, Կանբերա, Պուսան, Պրետորիա, Դակար, Մանա, Աբուջա, Պալերմո, Յաունդե, Հանոյ:
3. Յուրաքանչյուր շարքից դուրս գրել ավելորդը..... 1 միավոր
 1. բարոմետր, կողմնացույց, տեղումնաչափ, խոնավաչափ,
 2. սոյա, արևածաղիկ, ցորեն, կտավատ,
 3. Դնեպր, Վոլգա, Ճորոխ, Դանուբ,
 4. ձյուն, ցող, անձրև, կարկուտ:
4. Թվարկել Եվրոպայի 4 պետություն, որոնց մայրաքաղաքներից եթե հեռանանք 25 կմ-ից ավելի, կլինենք երկրի տարածքից դուրս..... 1 միավոր
5. Կազմել փոխկապակցված չորս գույգ.....1 միավոր
Անգարա, Վիկտորիա, Նևա, Բայկալ, Նեղոս, Լադոգա, Օնտարիո, Մուրբ Լավրենտիոս:
6. Կազմել փոխկապակցված չորս գույգ..... 1 միավոր
Եմեն, դաոսիզմ, Պակիստան, Չինաստան, սուննիզմ, Ճապոնիա, շիիզմ, սինթոիզմ:
7. Ընտրել այն երկրները, որոնց տարածքի արևմտյան հատվածում ձևավորվում է մերձարևադարձային միջերկրածովային կլիմայի տիպը.....1 միավոր
Հունգարիա, Չիլի, Նիգեր, Ալբանիա, Բուլղարիա, Ուկրաինա, Ավստրալիական Միություն, Ուզբեկստան, ԱՄՆ, Չինաստան, Հնդկաստան, Մեծ Բրիտանիա:
8. Տեքստից դուրս գրել մասնագիտական սխալները..... 1 միավոր
Աֆրիկայի ափերը խիստ կտրտված են: Հյուսիս – արևմուտքում Մինայ թերակղզին է, իսկ հարավում բարձրանում են Գվինեական և Կապի լեռները: Արևելաաֆրիկական բեկվածքի գոտում նշանավոր են Տանգանիկա, Մարակայբո և Կիվու լճերը, իսկ լեռնագագաթներից՝ Քենիան և Կիլիմանջարոն:
9. Երկու պետություններ ունեն նույն անունը, իսկ իրարից տարբերվում են մայրաքաղաքների անվանումներով: Ո՞ր պետություններն են, որո՞նք են դրանց մայրաքաղաքները: Երկու մայրաքաղաքները ո՞ր գետի ափին են գտնվում:..... 1 միավոր

10. Ուլքե՞ր և ե՞րբ են հայտնագործել..... 2 միավոր
1. Հարավային բնեռը
 2. Իսլանդիա կղզին
 3. Բահամյան կղզիները
 4. Նոր Գվինեա կղզին:
11. Սաքսաուլի տարիքը կարելի է արդյոք որոշել տարեկան օղակներով: Բացատրել..... 1 միավոր
12. Հետևյալ օրգանիզմների բնութագրման համար ընտրել ընդհանուր տերմին..... 1 միավոր
մրջնակեր, վելվիչի, եքիդնա, պանդա, ճանապարհորդների ծառ, էվկալիպտ, թզուկ գետաձի, բաոբաբ:
13. Քա՞նի գրամ աղ կարելի է ստանալ Սև ծովի 1 մ³ ջրից (հիմնավորել հաշվարկով)..... 1 միավոր
14. Որքա՞ն բնակիչ կունենա 5 մլն բնակչություն ունեցող երկիրը մեկ տարի անց, եթե բնական աճը 18%օ է, ներգաղթը կազմել է 20 000, իսկ արտագաղթը՝ 10 000 մարդ (պատասխանը հիմնավորել հաշվարկով):..... 2 միավոր
15. Հարավային լայնության 66°30՛ գուգահեռականի վրա բնեռային գիշեր լինում է..... 1 միավոր
1. հունիսի 22 – ին
 2. դեկտեմբերի 22 – ին
 3. մարտի 21 – ին
 4. սեպտեմբերի 23 – ին
16. Փոխակերպային ծագման ապար չէ..... 1 միավոր
1. գնեյսը,
 2. գրանիտը,
 3. կվարցը,
 4. մարմարը
17. Ո՞ր կղզիներն են արևադարձային գոտում..... 1 միավոր
1. Նյուֆաունդլենդ և Սախալին,
 2. Շրի Լանկա և Ճավա,
 3. Տասմանիա և Նոր Գվինեա
 4. Կուրա և Հայիթի:
18. Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալ չէ..... 1 միավոր
1. համաշխարհային շուկան
 2. մեքենայական արտադրությունը
 3. աշխատուժը
 4. համաշխարհային տրանսպորտը: